HUMAN RIGHTS HOUSE FOUNDATION

ՀՅՈՒՄԱՆ ՌԱՅԹՍ ՀԱՈՒՍ
Երևան

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Իրավապաշտպան գործունեությունը
պաշտպանելու և հզորացնելու
սկզբունքներն ու նորմերը

ԴՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ 3

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ 7
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԻՑ ՁԵՐԾ ՊԱՀԵԼԸ 9
ՀԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ 11
ՀԿ-ՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՐԳՈՒՄ 13
ԽՈՒՍԱՓՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻՑ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՑ 15
ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՃՆՇՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ 17
ԿԱՄԱՅԱԿԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ 19
ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ 21
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 23
ԽԱՂԱՂ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԻ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ 25
ՊԱՅՔԱՐ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄ 27
ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄ 29
ԿԻՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 31
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 33
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 35
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 37

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԸ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 38
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՔՍԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ 40

«Իրավապաշտպանների իրավունքները» գրքույկի նպատակն է խթանել իրավապաշտպան գործունեության պաշտպանության միջազգային նորմերի ճանաչումը, հստակ, հասանելի և հասցեական եղանակով բացատրել դրանք ու դրանց կիրառության համատեքստը: Գրքույկը պատրաստել է «Հյուման ռայթս հաուս հիմնադրամը» որպես «Հյուման ռայթս հաուսների» ցանցի հետ համատեղ նախագիծ՝ ի նպաստ իրավապաշտպան գործունեության պաշտպանության միջազգային նորմերը ներպետական մակարդակում իրագործելուն:

www.humanrightshouse.org

ԴՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանների գործունեությունը ողջ աշխարհում ուղղված է հանրության դրությունը բարելավելուն և խաղաղության ու ժողովրդավարության հաստատմանը նպաստելուն: Իրավապաշտպանները դրական փոփոխությունների ու զարգացման գործոններ են, նրանք կարևոր դերակատարում ունեն մարդու իրավունքները խախտումներից պաշտպանելու և մարդու համընդհանուր իրավունքներն առաջ մղելու հարցում:

«Ողջ աշխարհում իրավապաշտպանները ենթարկվում են հարձակումների, հալածանքի ու խարանի… մենք պետք է մեր երախտագիտությունը հայտնենք այս հազարավոր կանանց ու տղամարդկանց, որոնց հիրավի պարտական ենք»:
Միշել Ֆորստ, ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցով հատուկ զեկուցող:

Այդուհանդերձ, աշխարհի տարբեր հատվածներում իրավապաշտպանների նկատմամբ սպառնալիքները, ահաբեկումը, հարձակումները, քրեական հետապնդումն ու գործունեության սահմանափակումները սաստկանում են: Ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական սուբյեկտները փորձում են իրավապաշտպանների կերպարը նենգափոխել՝ մարդկանց պաշտպանից պետության թշնամու: Իրավապաշտպանների գործունեությանը խոչընդոտում են հիմնարար ազատություններին ու արտասահմանյան ֆինանսավորմանն առնչվող սիստեմատիկ ու խորացող արգելքները:

«Հյուման ռայթս հաուս հիմնադրամը» (ՀՌՀՀ) համարում է, որ խիստ կարևոր է հետարկել իրավապաշտպանների մասին դիսկուրսի նենգափոխման գործընթացը և բարձրացնել իրավապաշտպաններին պաշտպանող ու սատարող միջազգային նորմերի ընդունման ու կիրառության մակարդակը: Ավելի շատ աշխատանք է անհրաժեշտ տանել այդ նորմերի կիրարկման և առկա իրավիճակի ու տեղայնացված նորմերի միջև բացը լրացնելու ուղղությամբ:

Թեև ընդհանուր առմամբ իրավապաշտպանների համար իրավիճակը վատթարացել է, սակայն վերջին տարիներին ուժեղացել են նրանց պաշտպանության միջազգային նորմերը: 2013թ.-ից ի վեր մի քանի կարևոր բանաձևերի ընդունումից հետո ՄԱԿ-ը 2017թ. միաձայն ընդունեց մի բանաձև, որի նպատակն է վկայակոչել իրավապաշտպանների կարևոր դերն ու գործունեությունը:

Այս զարգացումներն անշուշտ փոխկապակցված են. որքան շատանում են սպառնալիքներն ու սահմանափակումները, այնքան մեծանում է միջազգային հանրության արձագանքի անհրաժեշտությունը՝ իր հետ բերելով իրավապաշտպաններին պաշտպանելու նորմեր ու սկզբունքներ:

Սակայն առկա է նաև այն իրողությունը, որ միջազգային մակարդակով ավելի մեծ թվով պետություններ են ընդունում իրավապաշտպանների պաշտպանությանը վերաբերող փաստաթղթեր, սակայն ներպետական մակարդակում կառավարությունները հաճախ սահմանափակում են նրանց գործունեությունը: Այստեղ է իրավապաշտպանների պաշտպանությունն իրագործելու մարտահրավերը, երբ միջազգային նորմերը պետք է տեղայնացնել, ինչն էլ «Հյուման ռայթս հաուս» ցանցի և հիմնադրամի գործունեության առանցքն է:

«Հիացած եմ իրավապաշտպանների խիզախությամբ ու զոհողությամբ, այս անձինք ու կազմակերպությունները մեր աչքերը, ականջներն ու խիղճն են»:
Անտոնիո Գուգերաս, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար:

2017թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևը դրվատում է իրավապաշտպաններին, սակայն նաև առիթ է տալիս հաշվի առնել իրավապաշտպաններին հասանելի պաշտպանության հնարավորությունները, դրանց իրագործման ամրապնդումը յուրաքանչյուր պետությունում: Սա մի հնարավորություն է, որից իրավապաշտպաններն ու քաղաքացիական հասարակությունը պետք է երկու ձեռքով կառչեն:

Բանաձևի միաձայն ընդունումը միջազգային ու ներպետական մակարդակի լուրջ լեգիտիմություն է հաղորդում իրավապաշտպանների գործունեությունը խրախուսելուն, այդ թվում՝ այն կառավարությունների կողմից, որոնք հնարավոր է՝ հակադրվեին բանաձևին: Այլ կերպ ասած՝ իրավապաշտպաններին վերաբերող գործողությունները այժմ պետք է ներպետական մակարդակում ավելի մեծ աջակցություն ստանան, քանի որ բոլոր պետությունները միջազգային մակարդակում սատարել են բանաձևի ընդունմանը:

ԳՐՔՈՒՅԿԻ ԳՈՐԾԱԾՈՒՄԸ

Որպեսզի նորմերի կիրառումն արդյունավետ լինի, կարևոր է, որ իրավապաշտպանները ճանաչեն ու հասկանան իրենց իրավունքները:

Այս գրքույկի միջոցով ՀՈՒՀՀ-ն նպատակ ունի խթանել իրավապաշտպան գործունեության պաշտպանության միջազգային նորմերի ճանաչումը, տրամադրել դրանց ու դրանց կիրառության համատեքստի հստակ, հասանելի և հասցեական բացատրություն: Այն իրավապաշտպանների համար կարող է ծառայել որպես գործիք՝ այդ նորմերը ներպետական մակարդակում տեղայնացնելու, կառավարական մարմինների հետ աշխատելու և այս հարցում միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների կատարումը պահանջելու, իրավապաշտպանների և նրանց գործունեության կարևորության մասին քննարկումներ անցկացնելու համար:

Գրքույկում ներկայացված է 16 նորմ, որոնք ընտրվել են՝ ըստ իրավապաշտպաններին ու նրանց գործունեությանը վերաբերող ուղենշային բանաձևերի բովանդակության՝ ըստ էության ամփոփելով դրանք:

Հստակ ձևակերպված ու հասանելի այս նորմերը կարող են իրավապաշտպաններին օգնել ավելի լավ ճանաչել իրենց պաշտպանության շրջանակները, ինչպես նաև ծառայել որպես գործիք իրազեկման աշխատանքներում: Դրանք կարող են նաև օգնել ներպետական մակարդակում շահերի պատշպանությանը վերաբերող իրենց գործունեության հարցում:

Գրքույկը պարունակում է նորմերի մեկնաբանություն և դրանց կիրառության վերլուծություն: Տեքստը մշակվել է այնպիսի փորձագետների մեկնաբանությունների հիման վրա, ինչպիսիք են ՄԱԿ-ի հատուկ զեկուցողները, ՀՈՒՀ հիմնադրամի ու Արևմտյան ու Կենտրոնական Եվրոպայի, Բալկանյան ու Կովկասի երկրների ցանցի փորձագետները: Նորմերի կիրառության համատեքստը ներկայացնելիս նկարագրվում են յուրաքանչյուր նորմի վրա ազդող միտումները, տրվում նորմերի կիրառության առաջարկներ:

Կարևոր է նաև վկայակոչել այն փաստը, որ նորմերը բխում են պետությունների իսկ ստանձնած պարտավորություններից, ուստի կառավարություններին կարելի է պատասխանատվության կանչել իրենց պարտականությունները չկատարելու դեպքում: Իրավապաշտպանները և այլ անձինք կարող են նաև օգտվել գրքույկից և կառավարություններին հիշեցնել, թե ինչ վարքագիծ են դրսևորել իրավապաշտպաններին վերաբերող բանաձևերի մշակման, դրանց շուրջ քվեարկման ժամանակ: Գրքույկում ամփոփված են նման բանաձևերի ընդունման արդյունքները, որոնք ցցուն են դարձնում պետությունների պարտավորությունների առկայությունը կամ բացակայությունը:

Նորմերը վերաբերում են ինչպես պոզիտիվ (գործողություն), այնպես էլ նեգատիվ (անգործություն) պարտականություններին: Որպես այդպիսին՝ դրանք տեքստում գունավորված են համապատասխանաբար կանաչ և կարմիր:

Ոչ պետական սուբյեկտները նույնպես հետաքրքրված կարող են լինել այս գործիքն ու նորմերն օգտագործելու հարցում, քանի որ բոլորն էլ պետք է տեղեկացված լինեն իրավապաշտպանների գործունեությանը, նրանց նետված մարտահրավերներին, այն անողոք միջավայրին, որում նրանք պաշտպանում ու առաջ են մղում մարդու իրավունքները:

Ո՞Վ Է ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆԸ

Իրավապաշտպաններն այն անձինք են, որոնք խաղաղ միջոցներով պաշտպանում և առաջ են մղում բոլոր մարդկանց իրավունքներն՝ առանց որևէ խտրականության: Իրավապաշտպանները կարող են համախմբվել ֆորմալ կառուցվածք ունեցող կամ չունեցող խմբերում կամ կազմակերպություններում, ինչպիսիք են՝ ասոցիացիաները կամ հիմնադրամները: Անկախ զբաղմունքից՝ ցանկացած ոք կարող է լծվել իրավապաշտպանության գործին, քանի որ իրավապաշտպան լինում են գործունեությամբ, ոչ թե՝ մասնագիտությամբ: Որոշ իրավապաշտպաններ կարող են լինել մարդու իրավունքների ոլորտում աշխատող մասնագետներ, մարդու իրավունքների գործեր վարող փաստաբաններ, լրագրողներ կամ լրատվամիջոցների աշխատողներ, արհմիության աշխատողներ, զարգացման ոլորտի աշխատողներ: Շատ իրավապաշտպաններ էլ իրենց գործունեության համար հնարավոր է՝ ոչ մի վարձատրություն չստանան:

Ակտիվ գործունեություն վարելով աշխարհի ցանկացած մասում՝ իրավապաշտպանները հիմնականում աշխատում են տեղական կամ ազգային մակարդակում, խթանում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն իրենց իսկ համայնքներում ու երկրներում: Կան նաև իրավապաշտպաններ, որոնք աշխատում են մարդու իրավունքներով զբաղվող միջազգային համայնքի հետ, ջատագովում ՄԱԿ-ում, տարածաշրջանային մարմիններում, օրինակ՝ ԵՄ-ում կամ ԵԽ-ում, տարբեր պետությունների մայրաքաղաքներում:

Իրավապաշտպան լինելու իրավունքն ապահովում է, որ նրանք կարողանան իրենց գործունեությունն անարգել վարել, անհրաժեշտության դեպքում՝ լինեն հատուկ օրենքով պաշտպանված: Իրավապաշտպանությունը ներառում է մարդու բոլոր իրավունքների ուղղությամբ աշխատանք, որը կարող է իրականացվել տարբեր մեթոդներով՝ լինի դա խաղաղ հավաքների կամ

Նկարում՝ «Հյուման ռայթս հաուս» ցանցի իրավապաշտպանների հավաքն Օսլոյում

սոցիալական ցանցերի միջոցով մարդու իրավունքների ջատագովում, իրավապաշտպան կազմակերպությունների հիմնում, դատական գործերի վարում կամ ոչ բռնի ցանկացած այլ միջոց: Այս իրավունքը ենթադրում է բազմաթիվ այլ իրավունքների, հատկապես՝ հիմնարար իրավունքների, ինչպիսիք են՝ արտահայտվելու, միավորվելու և հավաքների, ինչպես նաև գրքույկում ավելի մանրամասնորեն ներկայացված այլ իրավունքների իրացում:

ՀԱՎԵԼՅԱԼ ՆՅՈՒԹԵՐ

Գրքույկը պատրաստվել է ՀՈՀ հիմնադրամի և ՀՈՀ արշավի շրջանակներում, որն ուղղված է իրավապաշտպանների գործունեությունը և այն պաշտպանելու, հզորացնելու և սատարելու նորմերը խթանելուն:

ՀՈՀՀ-ն պատրաստել է նաև այս նորմերին վերաբերող հավելյալ տեսաձայնային նյութեր, ինչպես նաև հավելված, որտեղ իրավապաշտպանների պաշտպանությանը վերաբերող բանաձևերը ներկայացված են ամբողջությամբ: Այս նյութերն ու գրքույկի էլեկտրոնային տարբերակը բեռնելու հղումը, ինչպես նաև ՀՈՀ ցանցի ու հիմնադրամի տեղեկատվական արշավի մասին նորությունները կզետեղվեն humanrightshouse.org կայքում:

Սույն տեղեկատվական արշավի շրջանակներում «Հյուման ռայթս հաուս» ցանցի անդամները կթարգմանեն գրքույկն ու հարակից նյութերն իրենց լեզուներով ու նույնպես կտեղադրեն ինտերնետում:

Գրքույկի ու ՀՈՀ հիմնադրամի գործունեության հետ կապված հավելյալ տեղեկությունների համար դիմել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝

hrh@humanrightshouse.org

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ

Քաղաքական առաջնորդները, ինչպես նաև տնտեսվարողները, լրատվամիջոցներն ու կրոնական առաջնորդները պետք է «հրապարակայնորեն ընդունեն իրավապաշտպանների դերի կարևորությունն ու լեգիտիմությունը մարդու իրավունքների, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության խթանման հարցում»: Նրանք պետք է դա անեն «հրապարակային հայտարարությունների, քաղաքականություններ կամ օրենքներ ընդունելու միջոցով… այդ թվում՝ հրապարակայնորեն դատապարտելով իրավապաշտպանների նկատմամբ բռնության ու խտրականության բոլոր դեպքերը»:

Բռնության ու խտրականության դեպքերում «հանրային տարբեր տեսակի գործունեությամբ զբաղվող առաջամարտիկ գործիչները, ներառյալ՝ քաղաքական, ռազմական, սոցիալական, կրոնական, բիզնեսի և ԶԼՄ-ների գործիչները… պետք է նման պրակտիկաները մերժող հստակ դիրքորոշում ցուցաբերեն»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/ HRC/RES/22/6), պարբերություն 5,
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2015թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/70/161), պարբերություններ 4 և 21:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավապաշտպաններին հրապարակայնորեն աջակցելու միջոցները չեն սահմանափակվում հայտարարություններով, քաղաքականությունների ու օրենքների ընդունմամբ, դրանք կարող են գործադրվել որպես խրախուսում, որպեսզի հանրային գործիչները կիրարկեն առկա և անհրաժեշտ մնացած բոլոր միջոցները:

Պետությունն է կրում իրավապաշտպաններին պաշտպանելու հիմնական պատասխանատվությունը: Այդուհանդերձ, հրապարակայնորեն նրանց աջակցելու պատասխանատվությունը կիսում են հանրային գործունեություն վարող բոլոր գործիչներն ու պետական մարմինները, որոնք նույնպես պետք է հստակ դիրքորոշում ընդունեն իրավապաշտպանների նկատմամբ բռնության ու խտրականության դեպքերը մերժելու հարցում:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Իրավապաշտպանների անգնահատելի դերի հրապարակային ճանաչումը նրանց պաշտպանության տարրական բաղկացուցիչներից է: Դա առաջին քայլն է «նրանց նկատմամբ սպառնալիքների ու վտանգների կանխարգելման կամ առնվազն նվազեցման» ուղղությամբ, ինչպես նշում է ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցողը:

Այս առաջին քայլին պետք է հաջորդեն պետության կողմից իրավապաշտպանների համար ապահով միջավայր ստեղծելուն ուղղված ավելի խորքային հանձնառություններն ու քաղաքականության կիրարկումը: Երբ հասարակության որոշ խմբեր, հատկապես՝ «ավանդական արժեքներ» պաշտպանող խմբերը հարձակումներ են գործում իրավապաշտպանների նկատմամբ, պետական գործիչների հրապարակային աջակցությունն իրավապաշտպաններին հստակ ուղերձ է հղում, որ նման գործողություններ անողները ենթակա են պատասխանատվության, ինչը կարևոր է հետագա բռնությունները կանխելու հարցում:

Այն երկրներում, որտեղ իրավապաշտպանները զրպարտության արշավների թիրախ են դառնում և ներկայացվում իբրև պետության թշնամիներ, նրանց գործունեության հրապարակային աջակցությունը հավելյալ լեգիտիմություն է հաղորդում նրանց: Ավելին, դա խրախուսում է իրավապաշտպաններին, որ շարունակեն իրենց աշխատանքը:

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԻՑ ԶԵՐԾ ՊԱՀԵԼԸ

Պետությունները պետք է ապահովեն, որ «մարդու իրավունքների պաշտպանությունն ու առաջ մղումը քրեական հետապնդման չենթարկի», և որ իրավապաշտպանները «իրենց գործունեության պատճառով իրենց համընդհանուր իրավունքներն իրացնելու խոչընդոտներ չունենան»: Մարդու համընդհանուր իրավունքներն իրացնելու յուրաքանչյուրի իրավունքը ներառում է նման իրավունքների անարգել պաշտպանությունը:

«Յուրաքանչյուր ոք պարտավոր է պաշտպանել այլոց մարդու իրավունքները»: Իրավապաշտպաններն, ինչպես ամեն մարդ, ունեն իրենց համընդհանուր իրավունքներն իրացնելու և այլոց հետ դրա շուրջ միավորվելու իրավունք: Այս իրավունքը չի կարող վտանգվել կամ ստորադասվել զուտ անձի գործունեության բնույթի պատճառով: Իրավապաշտպանների վրա ազդեցություն ունեցող օրենսդրությունը պետք է լինի «հստակորեն սահմանված, որոշակի և ոչ հետադարձ»: Իրավապաշտպանների առնչությամբ դրված սահմանափակումները պետք է լինեն «իրավական, համաչափ, անխտրական և անհրաժեշտ»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի իրավապաշտպանների մասին 1998թ. դեկտեմբերի հռչակագիր (UN doc: A/RES/53/144),
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/22/6), պարբերություններ 4, 9, 11, 11 (ա) և 11 (դ):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս համատեքստում իրավապաշտպանների քրեական հետապնդումը փորձ է նրանց գործունեությունը իրավական համակարգի միջոցով կամ հանրային դիսկուրսը շահարկելով վարկաբեկելու, սաբոտաժի ենթարկելու կամ խոչընդոտելու:

Քրեական հետապնդումը կարող է իրականացվել պետական գործիչների պատիվը պաշտպանելու պատրվակով ստեղծված քրեական հոդվածների (զրպարտություն), հակաահաբեկչական կամ ազգային անվտանգությանն առնչվող օրենսդրության անտեղի կիրառման, նախազգուշական միջոցների անտեղի կիրառման կամ մարդու իրավունքներին առնչվող գործունեությունն առանց պետական լիազորության իրականացնելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու միջոցով: Քրեական հետապնդումը կարող է իրականացվել նաև կեղծ մեղադրանքներով ձերբակալման ու հետապնդման, պետական գործիչների կողմից իրավապաշտպանների խարանման, ցույցերի ու հանրային բողոքի արտահայտման միջոցառումների սահմանափակման միջոցով, ինչպես նկարագրված է Մարդու իրավունքների ինտերամերիկյան հանձնաժողովի «Իրավապաշտպանների քրեական հետապնդումը» զեկույցում:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Աշխարհի շատ վայրերում կառավարությունները շարունակաբար ընդունում են այնպիսի օրենքներ, որոնք քրեական հետապնդում են սահմանում առանց նախնական լիազորման, այսպես կոչված՝ «քաղաքական գործունեություն» և իրավապաշտպանությանն առնչվող գործունեություն վարելու համար: Նման օրենքները հաճախ ձևակերպված են լինում խիստ ընդհանրական ձևով, ներմուծվում հետադարձ գործողության դրույթներով և որպես կանոն չեն ունենում ժողովրդավարական կարգին սպառնացող իրական վտանգ կանխելու անհրաժեշտություն: Քրեականացման դրույթները, հատկապես ՀԿ-ների գործունեությունը կարգավորող օրենքներինը, հաճախ անհամաչափ են լինում կատարված արարքի հանդեպ:

Իրավապաշտպանները հաճախ ենթարկվում են անհիմն քրեական հետապնդման, որպեսզի կաթվածահար արվի կամ ապալեգիտիմացվի նրանց գործունեությունը, հատկապես եթե դա վերաբերում է կառավարության քննադատությանը: Իրավապաշտպանների նկատմամբ կեղծ մեղադրանքներ առաջադրելով՝ իշխանությունները նպատակ ունեն նրանց մեկուսացմանն օրինականություն հաղորդել: Արդյունքում ստեղծվում է չարակամ ու ռեպրեսիվ մթնոլորտ, որում իրավապաշտպաններն ուղղակի մաքառում են մարդու իրավունքների պաշտպանության ու առաջխաղացման համար:

Պետությունները պետք է խուսափեն այնպիսի միջոցների կիրառումից, որոնք խարանավորում, ապալեգիտիմացնում, մարտահրավերներ են ստեղծում կամ վատագույն դեպքում՝ քրեորեն հետապնդում են մարդու իրավունքների պաշտպանության գործունեությամբ զբաղվողներին: Պետությունները, փոխարենը, պետք է ակտիվ դերակատարում ստանձնեն իրավապաշտպանների անվտանգ գործունեության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու հարցում, այդ թվում՝ ապահովելով, որ օրենսդրությունը վերահսկողություն չսահմանի իրավապաշտպանների և նրանց գործունեության նկատմամբ:

ՀԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ

Պետությունները չպետք է սահմանափակումներ սահմանեն իրավապաշտպան գործունեության ֆինանսավորման հնարավոր աղբյուրների նկատմամբ՝ բացառությամբ «այնպիսիների, որոնք արդեն իսկ սահմանված են մարդու իրավունքների հետ առնչություն չունեցող ցանկացած գործունեության համար՝ նպատակաուղղված դրա թափանցիկությանն ու հաշվետվողականությանը»:

«Որևէ օրենք չպետք է քրեական հետապնդում ենթադրի կամ ապալեգիտիմացնի իրավապաշտպան գործունեությունը՝ հիմնված դրա ֆինանսավորման աղբյուրի վրա»: Քաղաքացիական հասարակության գործունեության ֆինասնավորմանն առնչվող օրենսդրությունը պետք է լինի «թափանցիկ ու անխտրական»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/22/6), պարբերություն 9
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբելայի 2015թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/70/161), պարբերություն 10 (դ):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հասարական կազմակերպությունները պետք է ազատ լինեն դրամահայթայթման գործունեությունը վարել այնպիսի կարգավորիչ դաշտում, ինչպիսին վերաբերելի է բոլոր սուբյեկտներին ու պետությանը՝ անկախ նրանից՝ դա վերաբերում է իրավապաշտպան, թե՞ այլ գործունեությանը: Այս իմաստով պետությունները չպետք է մտցնեն ՀԿ-ների, հատկապես իրավապաշտպան ՀԿ-ների համար հատուկ թիրախավորող կարգավորումներ:

Խտրական միջոցները ներառում են ֆինանսավորման հասանելիության սահմանափակում՝ ՀԿ-ների նկատմամբ ծայրահեղ վերահսկողություն կամ բյուջետահաշվարկային ծանրաբեռնող գործընթացներ կիրառելու միջոցով:

Ֆինանսավորման աղբյուրը չպետք է օգտագործվի որպես ՀԿ-ների նկատմամբ ճնշումներ բանեցնելու լծակ կամ նրանց գործունեությունը նսեմացնելու կամ քրեականացնելու արդարացում: Պետությունները չպետք է ֆինանսավորման հասանելիության սահմանափակումները հիմնեն դրամատուների աշխարհագրական տեղադիրքի վրա, օրինակ՝ նույն երկրից են, ինչ ՀԿ-ները, թե՞ այլ երկրից են:

ՄԱԿ-ի խաղաղ հավաքների ու միություններ կազմելու հարցերով հատուկ զեկուցողն ու Վենետիկի հանձնաժողովը մշակել են նորմեր, որոնք վերահաստատում են ֆինանսավորման հասանելիության իրավունքը՝ ներառյալ արտասահմանյան աղբյուրներից՝ բխեցնելով դրանք միություններ կազմելու ազատությունից՝ որպես դրա անօտարելի մաս:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Աշխարհում մեծանում է այն երկրների թիվը, որոնք ընդունում են քաղաքացիական հասարակության կողմից արտասահմանյան ֆինանսավորումը սահմանափակող և խարանավորող օրենքներ, կիրառում նման պրակտիկաներ հատկապես իրապաշտպան կազմակերպությունների ու անհատների նկատմամբ: Այս մասին փաստեր է ներկայացնում «Հյուման ռայթս հաուս հիմնադրամի»«Քաղաքացիական հասարակության ֆինանսավորումը» զեկույցը: 2012թ.-ից ի վեր աշխարհի ավելի քան 60 երկիր ընդունել են օրենքներ, որոնցով քրեորեն հետապնդվում է իրավապաշտպան գործունեության արտասահմանյան ֆինանսավորումը, այդ թվում՝ Ադրբեջանում, Բելառուսում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Եթովպիայում, ընդհուպ մինչև այնպիսի երկրներ, ինչպիսին Հունգարիան է:

ՀՌՀ ցանցի, ՀՌՀ հիմնադրամի և գործընկերների հրապարակած զեկույցի նախաբանում («Դիմադրելով Եվրոպայի չժողովրդավարություններին») ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով հատուկ զեկուցողն, օրինակ, Բելառուսում արտասահմանյան ֆինանսավորման նկատմամբ կիրառվող սահմանափակումներն անվանում է «նոր Բեռլինի պատ»: Իսկ ահա Հավաքների ու միություններ կազմելու ազատության հարցերով հատուկ զեկուցողն արձանագրում է, որ նման օրենքներն անհրաժեշտ չեն, այլ պարզապես կառավարությանը ոչ հնազանդ հասարակական կազմակերպություններին վերահսկելու, սահմանափակելու և վերջին հաշվով ֆինանսավորում ստանալուն խոչընդոտելու գործիք են: Նման օրենքների միջոցով կառավարությունները նպատակ ունեն փոխարինել անկախ քաղաքացիական հասարակությունը իրենց «պարտական» խմբերով:

Սահմանափակող մեխանիզմները ՀԿ-ներին ճնշելու արդյունավետ մեթոդ են, քանի որ արտասահմանյան ֆինանսավորումը հաճախ իրավապաշտպան ՀԿ-ների միակ հասանելի ֆինանսական աջակցությունն է: Ֆինանսավորման սահմանափակումը խոչընդոտում է կազմակերպությունների գործունեության շարունակականությունը, ինքնավարությունն ու ընդհանրապես գործունեություն վարելու կարողությունը: Հետևանքն այն է, որ քննադատական ձայները ճնշվում են:

ՀԿ-ՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՐԳՈՒՄ

Պետությունները պետք է «լիարժեքորեն ճանաչեն իրավապաշտպանների ու քաղաքացիական հասարակության այլ գործիչների անկախ ձայնի կարևորությունը», այդ թվում՝ «հարգելով նրանց գործունեության անկախությունը»:

Նրանք պետք է «հարգեն, պաշտպանեն ու ապահովեն իրավապաշտպանների՝ միություններ կազմելու ազատության իրավունքը» և «ապահովեն, որ անհատների, խմբերի ու հասարակական այլ մարմինների նկատմամբ սահմանված հաշվետվողականության պահանջները անհարկիորեն չխոչընդոտեն նրանց ֆունկցիոնալ ինքնավարությունը»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2017թ.դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/72/247), պարբերություն 5,
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ.ապրիլի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/22/6),պարբերություններ 5, 8, 9:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պետությունները չպետք է միջամտեն ՀԿ-ների գործունեությանը կամ այլ կերպ գործադրեն նրանց նկատմամբ ճնշումներ կամ վերահսկողություն, որով կվտանգվի նրանց անկախությունն ու ինքնավարությունը: Մարդու իրավունքների խորհուրդը պետություններին հստակորեն կոչ է արել ապահովել, որ քաղաքացիական հասարակության գործիչներին առնչվող վարչարարական պահանջները հարգեն նրանց ֆունկցիոնալ ինքնավարությունը:

Նման պահանջները կարող են ազդել կազմակերպությունների ազատությունների վրա այնպիսի հարցերում, ինչպիսիք են գործունեությանը թիրախ խնդիրների ընտրություն, Խորհրդի անդամների կամ աշխատակիցների ընտրություն և այլն: Պատժիչ հատուցումից խուսափելը կարող է հանգեցնել ինքնագրաքննության:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Քաղաքացիական հասարակությունն ուժեղ է, քանի որ այն անկախ է՝ ներառյալ կառավարական մարմիններից ու դրամատուներից: ՀԿ-ները ազատորեն կարող են ընտրել իրենց ղեկավարությանը, իսկ անհատները հասարակական այդ միություններին միանում են իրենց կամքով: Նման անկախությունն էական է կառավարման մարմիններին հաշվետվության կանչելու և ոչ պետական սուբյեկտներին մարտահրավեր նետելու համար:

«Պետություններն ու այլ սուբյեկտները հաճախ ավելի ծանրաբեռնիչ պահանջներ են պարտադրում մարդկանց միությունների վրա ինչպես օրենքով, այնպես էլ պրակտիկ իմաստով, մինչդեռ բիզնես ոլորտն ավելի նպաստավոր վերաբերմունքի է արժանանում», պնդում է ՄԱԿ-ի հավաքների ու միություններ կազմելու ազատության հարցերով հատուկ զեկուցողը:

Չափից ավելի խիստ նորմատիվային դաշտն իշխանություններին տալիս է կազմակերպությունների խորհուրդների կազմի նկատմամբ վերահսկողության ուժ ու ընդհանուր առմամբ հնարավորություն՝ հետևելու կազմակերպությունների ներքին ընթացակարգերին: Նման վերահսկողության կարիք չկա, դա վնասում է ՀԿ-ների ինքնավարությանը և չի կիրառվում հասարակությունում այլ ոլորտների, մասնավորապես՝ բիզնեսի նկատմամբ:

Նման ընթացակարգերը նպաստավոր են լինում կառավարությանն աջակցող խմբերի համար: Այսինքն՝ անկախ քաղաքացիական հասարակության տարածքը ավելի ու ավելի շատ են զբաղեցնում նման խմբերը այն ժամանակ, երբ կառավարությունները փորձում են փոխարինել անկախ քաղաքացիական հասարակությունն իրեն հավատարիմ խմբերով: Իշխանություններին հնազանդ նման խմբերը նաև չարաշահում են միջազգային մեխանիզմները, քանի որ փորձում են մրցակցել ՀԿ-ների հետ, որպեսզի միջազգային դաշտում իրենք լինեն:

ՀԿ-ների անկախությանը խոչընդոտելն ընդհանուր առմամբ սպառնալիք է մարդու իրավունքներին:

ԽՈՒՍԱՓՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻՑ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՑ

«Այն դեպքերում, երբ առկա են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գրանցումն ու ֆինանսավորումը կարգավորող օրենսդրություն և ընթացակարգեր», դրանք պետք է լինեն «թափանցիկ, անխտրական, առանց ձգձգումների և մեծ ծախսեր չպահանջող»:

Իրավապաշտպանների գործունեության վրա ազդող օրենսդրությունը պետք է «հստակորեն սահմանված, որոշակի և ոչ հետադարձ» լինի: Այն չպետք է արգելակի ՀԿ-ների ֆունկցիոնալ ինքնավարությունը:

Իրավապաշտպանների նկատմամբ կիրառվելիք որևէ սահմանափակում պետք է «իրավական, համաչափ, անխտրական ու անհրաժեշտ» լինի և պետք է «տա այն բողոքարկելու հնարավորություն և խուսափի վերագրանցում պահանջելուց»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/22/6), պարբերություն 8,
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2015թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/70/161), պարբերություն 10 (դ):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական հասարակության միավորումների գրանցումը վերահսկող միջոցառումներ նախատեսելու կարիք պետությունները չունեն, դա կարելի է անել, սակայն պարտադիր չէ: Շատ երկրներում, որտեղ քաղաքացիական հասարակության մասնակցությունը բարձր է, և կա նպաստավոր միջավայր, նախնական գրանցումը պարտադիր չէ:

Եթե նման կարգավորումներ արդեն իսկ ամրագրված են, ՄԱԿ-ն ընդգծել է, որ իրավունքի գերակայության սկզբունքները կիրառելի են նաև այս կարգավորումների նկատմամբ, այսինքն՝ դրանք պետք է լինեն որոշակի, ոչ հետադարձ, իրավական, համաչափ, անխտրական և անհրաժեշտ: Ավելին, գրանցման գործընթացները պետք է լինեն արագ, առանց ձգձգումների և ՀԿ-ների ստեղծման գործընթացը դանդաղեցնելու գործիք չդառնան:

Պետական մարմինների որոշումները բողոքարկելու հնարավորությունը պետք է ամրագրված լինի ՀԿ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրությունում, որպեսզի ՀԿ-ների համար մատչելի լինի իրավաբանական կարգավիճակ ստանալու հավասարությունը: Չպետք է նախատեսված լինեն վերագրանցման պահանջներ: Սա կարևոր է, որպեսզի ՀԿ-ներն ունենան շարունակական ու երկարաժամկետ գործունեության տեսլական:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գրանցումը կարգավորող ընթացակարգերը կարևոր դեր ունեն ՀԿ դաշտի նկատմամբ վերահսկողություն սահմանելու իմաստով: Այդ իսկ պատճառով միավորվելու ազատության իրավունքը սահմանափակող լիազորությունները պետք է ձևակերպվեն ըստ նպատակահարմարության:

Պետությունները չպետք է պարտադրեն գրանցման երկարատև, ծանրաբեռնող կամ չափից դուրս բյուրոկրատական ընթացակարգեր, քանի որ դրանք կարող են արգելակել ՀԿ-ների արդյունավետ գործունեությունը:

Որոշ երկրներում ասոցիացիաների ներկայացրած գրանցման հայտերը կարող են մինչև մեկ ամիս քննվել, մինչդեռ բիզնես սուբյեկտների գրանցումը շատ երկրներում ավարտված է լինում հայտը ներկայացնելու պահին: Այս մասին վկայում է ՄԱԿ-ի հավաքների և միություններ կազմելու ազատության հարցերով հատուկ զեկուցողը:

Անթույլատրելի է, որ գրանցումն օգտագործվի որպես կազմակերպությունների ստեղծումը վերահսկելու գործիք: Իրականում գրանցումը պետք է իրավաբանական կարգավիճակ տրամադրելու գործիք լինի այն համատեքստերում, որտեղ իրավաբանական կարգավիճակը պահանջվում է: Բյուրոկրատական քաշքշուկներ ենթադրող վերագրանցման և հաշվետվություններ ներկայացնելու պահանջները սովորաբար չեն համապատասխանում անհրաժեշտության պայմանին, քանի որ գործածվում են բացառապես ՀԿ-ների գործունեությունը վերահսկելու նպատակով: Դրանք չեն համապատասխանում նաև անխտրական լինելու պահանջին, քանի որ ավելի շատ պահանջներ են սահմանում քաղաքացիական հասարակության նկատմամբ, քան բիզնես սուբյեկտների: Կասկածներ կան նաև, որ դրանք համաչափ են, քանի որ ՀԿ-ների նկատմամբ իրենց բյուջեների և ֆինանսական հարցերի հետ կապված պահանջներն ավելի մեծ են, քան, օրինակ, բիզնեսների:

ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՃՆՇՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ

Պետությունները պետք է «ձեռնպահ մնան միջազգային հաստատությունների հետ համագործակցող կամ համագործակցության ցանկություն ունեցող անձանց, ներառյալ՝ նրանց ընտանիքի անդամների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ճնշման միջոցներ կամ վախեցնելու որևէ գործողություն կիրառելուց, ինչպես նաև պետք է պաշտպանեն նրանց նման դեպքերում»:

ՄԱԿ-ը «խստորեն դատապարտում է իրավապաշտպանների նկատմամբ ճնշումներն ու բռնությունը, երբ նրանք ջատագովում են մարդու իրավունքներ, բարձրաձայնում մարդու իրավունքների խախտումների ու չարաշահումների մասին, փորձում այդ մասին տեղեկություններ ձեռք բերել»: Ավելին, ՄԱԿ-ը դատապարտում է «իրավապաշտպաններին, նրանց օրինական ներկայացուցիչներին և ընտանիքի անդամներին վախեցնելու և նրանց նկատմամբ ճնշման միջոցներ կիրառելու բոլոր տեսակի գործողությունները պետական և ոչպետական սուբյեկտների կողմից... և բոլոր պետություններին հորդորում է միջազգային կառույցների հետ համագործակցելու իրավունքն արդյունավետորեն պաշտպանել»:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) պետություններին կոչ է անում «ձեռնպահ մնալ իրավապաշտպանների նկատմամբ վախեցնող և ճնշման միջոցներ գործադրող որևէ գործողությունից, մասնավորապես՝ ֆիզիկական հարձակումներից, կամայական ձերբակալումներից, դատական կամ վարչարարական հետապնդումներից»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/HRC/RES/22/6), պարբերություն 14,
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2015թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/70/161), պարբերություն 6,
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2016թ. մարտի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/31/32), պարբերություն 5,
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2017թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/72/247), պարբերություն 8,
• ԵԽԽՎ 2016թ. հունվարի բանաձև (2095), պարբերություն 6.1:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս նորմը կիրառելի է ոչ միայն այն դեպքերի նկատմամբ, երբ իրավապաշտպանները համագործակցում են ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի կամ միջազգային այլ կազմակերպությունների հետ, այլև ընդհանրապես բոլոր իրավիճակներում, երբ իրավապաշտպաններին սպառնում են ճնշման միջոցներով՝ պայմանավորված իրենց գործունեության հետ: Նման միջոցներից է մարդու իրավունքները ջատագովելու, մարդու իրավունքների խախտումների ու չարաշահումների մասին բարձրաձայնելու կամ այդ մասին տեղեկություններ հավաքելու պատճառով վրիժառությունը:

Այս չափորոշիչը վերաբերում է ճնշումների, վախեցնելու, ճնշումների, վարկաբեկման բոլոր ձևերին և բոլոր այն բացասական գործողություններին, որոք միտումնավոր ուղղված են իրավապաշտպաններին վնասելուն՝ լինեն դրանք պետության, թե՞ ոչ պետական սուբյեկտների կողմից կազմակերպված:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Իրավապաշտպանների տեսանելիության բարձրացումը միջազգային մակարդակում երկար տարիներ համարվել է նրանց ապահովության կարևոր բաղադրիչ: Ցավոք, միջազգային կառույցների հետ համագործակցությունը իրավապաշտպաններին, նրանց հարազատներին ու կազմակերպություններին վախեցնելու և նրանց նկատմամբ ճնշումներ կիրառելու պատճառներից է դարձել:

Ճնշումների պատճառով տարբեր կառույցներ դժվարությամբ են կարողանում չմիջնորդավորված տեղեկություններ ստանալ իրավախախտումների զոհերից ու ականատեսներից: Միջազգային կառույցների հետ համագործակցող քաղաքացիական հասարակության անդամները ունեն ամենաբարձր մակարդակի պաշտպանության կարիք: Այս ուղղությամբ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը 2016թ. իր տարեկան զեկույցում առաջարկել է ստեղծել իրավապաշտպանների հանդեպ ԵԽ-ի հետ շփումների պատճառով առաջ եկած ճնշումներից պաշտպանությունն ուժեղացնող մեխանիզմ:

Պետությունները պետք է ոչ միայն ձեռնպահ մնան իրավապաշտպանների նկատմամբ ճնշման միջոցներից ու վախեցնելուց, այլև պետք է նպաստեն միջազգային կառույցների հետ համագործակցելու իրավունքի իրացումն ապահովող անվտանգ ապահով միջավայր ստեղծելուն:

ԿԱՄԱՅԱԿԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ասվում է, որ «ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման, կալանավորման կամ վտարման»:

Պետությունները պետք է ապահովեն, որ ոչ ոք չենթարկվի «առանց պատշաճ ընթացակարգերով երաշխիքների կալանավորման և ազատազրկման, որը հավասար է կալանավորված անձին օրենքի պաշտպանությունից դուրս դնելուն»:

Իրավապաշտպանները չպետք է կամայականորեն կալանավորվեն կամ ձերբակալվեն «իրենց իրավունքներն ու հիմնարար ազատություններն, ինչպիսիք են՝ արտահայտվելու, խաղաղ հավաքներ ու միություններ կազմելու իրավունքներն իրացնելու պատճառով»: Պետությունները պետք է «կոնկրետ քայլեր ձեռնարկեն իրավապաշտպանների կամայական ձերբակալումն ու կալանավորումը կանխարգելելու ու նման պրակտիկաներին վերջ տալու ուղղությամբ»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ. դեկտեմբերի 10, (A/ RES/3/217), հոդված 9,
• Մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/22/6), պարբերություն 10 (գ),
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբելայի 2015թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/70/161), պարբերություն 8:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կամայական կալանավորումը պետականորեն ճանաչված օրենքների ու միջազգային նորմերի սահմաններից դուրս ազատության իրավունքի խախտումն է: Այս սկզբունքը կիրառելի է բոլոր մարդկանց նկատմամբ, ներառյալ՝ իրավապաշտպանների, որոնց հանդեպ նման պրակտիկաները հաճախ են կիրառվում և պայմանավորված են նրանց գործունեությամբ:

Կամայական ազատազրկման հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբը բացահայտել է, որ իրավապաշտպանությամբ զբաղվելու պատճառով պետությունների կողմից անձանց կամայականորեն ազատությունից զրկելու աճող միտում կա: Աշխատանքային խումբն ընդգծում է, որ «առանձնահատուկ խստացված քննություն» պետք է անցկացվի այն դեպքերում, երբ նման հետապնդման են ենթարկվում իրավապաշտպանները: Ավելին, երբ իշխանությունները կալանավորում են քրեական «սովորական» օրենքների շրջանակներում, սակայն ակնհայտորեն այլ նպատակով, ուրեմն նման կալանավորումները նույնպես կամայական են:

Իրավապաշտպանները առանձնահատուկ ձևով խոցելի են նման պրակտիկաների ժամանակ, հատկապես երբ որոշ դեպքերում պետություններն իրենք են կամայականորեն ձերբակալում և կալանավորում իրավապաշտպաններին՝ բողոքի ցույցերին կամ հանրահավաքներին նրանց մասնակցությունը կանխելու նպատակով:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Որոշ երկրների կառավարություններ նախաքննական կամայական կալանավորումը և ազատազրկումը գործածում են որպես իրավապաշտպաններին, լրագրողներին և ակտիվիստներին համակարգված կերպով ճնշելու գործիք: Այս պրակտիկան խախտում է արդար դատաքննության իրավունքը և այնպիսի բովանդակային իրավունքներ, ինչպիսիք արտահայտվելու, միություններ կազմելու և հավաքների ազատություններն են: Այս մասին ընդգծել է «Հյուման ռայթս հաուս հիմնադրամն» իր «Շրջադարձային կետը Ադրբեջանում» զեկույցում:

Պետությունները պետք է ստեղծեն նոր օրենքներ, վերանայեն և լրամշակեն եղածները, որպեսզի կալանավորումների և ձերբակալումների հարցում իրավական շրջանակը հստակ լինի և համապատասխանի միջազգային նորմերին: Նրանք պետք է մշտադիտարկեն այս գործողությունների կիրառումը, որպեսզի ապահովեն ազատության իրավունքի արդյունավետ պաշտպանությունը:

ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Պետությունները պետք է ապահովեն, որ «այլախոհ կարծիքները խաղաղ կերպով արտահայտվեն»: Այս առումով արտահայտվելու ազատությունը քրեականացնող միջոցներից պետք է ձեռնպահ մնալ, ինչպես նաև սահմանափակել զրպարտության համար սահմանվող տույժերը, որպեսզի «ապահովվի համաչափություն և հասցված վնասին համապատասխան հատուցում»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթում.
• Մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/ HRC/RES/22/6), OP 11 and 11 (f):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավապաշտպանները պետք է իրենց ապահով, պաշտպանված ու զորեղացված զգան, որպեսզի առանց ճնշումների, ինքնագրաքննության կամ ճնշումների ենթարկվելու վախի՝ խաղաղ կերպով արտահայտեն իրենց տեսակետները: Սա ենթադրում է այնպիսի մթնոլորտի ստեղծում, որում կարող է բարենպաստորեն գործել ակտիվ ու ուժեղ քաղաքացիական հասարակությունը: Առաջնորդները պետք է խուսափեն այլախոհ մարդկանց խարանավորելուց և կանխեն այլախոհ մտքեր արտահայտող իրավապաշտպանների նկատմամբ հարձակումները, ներառյալ՝ ապահովեն նման դեպքերի պատշաճ քննություն:

Այլախոհության դրսևորումը կարող է տարբեր կերպ լինել. այն կարող է դրսևորվել խաղաղ ցույցերի ձևով կամ լրատվամիջոցներով հրապարակումներով, հանրային միջոցառումների ժամանակ, բոյկոտի, օրինակ՝ ընտրական գործընթացի կամ հանրաքվեի բոյկոտի կոչեր անելու միջոցով: Պետությունները պետք է կատարեն իրենց ինչպես պոզիտիվ, այնպես էլ՝ նեգատիվ պարտականությունները, այսինքն՝ ձեռնպահ մնան այլախոհ կարծիքների արտահայտման իրավունքին միջամտելուց, բայցև խաղաղ կերպով արտահայտվող նման կարծիքների արտահայտումը պաշտպանող միջոցներ ձեռնարկեն:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Կա միտում, որ պետությունները փորձում են լռեցնել այլախոհ իրավապաշտպաններին, հատկապես՝ կառավարության քննադատներին ու կոռուպցիա մերկացնողներին ու մարդու իրավախախտումների մասին բարձրաձայնողներին: Նույն կերպ, առաջընթաց արձանագրած տարիներ անց, պետություններն ընդունում են սահմանափակող օրենսդրություն, որը քրեականացնում է ինտերնետային և ոչ ինտերնետային տիրություն տեղ գտած զրպարտությունը:

Ընտրությունների բոյկոտի դեպքում նման այլախոհ կարծիքի քրեականացումը սահմանափակում է ժողովրդավարական դաշտը և նվազեցնում քաղաքական ընդդիմության հնարավորությունները: Այս մասին ընդգծել է մարդու իրավունքների հարցով ՄԱԿ-ի հատուկ հանձնակատարը Բելառուսի մասին իր հայտարարությունում:

Այլախոհությունը սահմանափակող միջոցառումների նշանակալի բացասական ազդեցությունը հաշվի առնելով՝ Մարդու իրավունքների խորհուրդը փորձել է պետություններին խրախուսել արգելակել այս միտումը: Այն ողջունել է զրպարտությունը ապաքրեականացնող միջոցառումները, որոնց շնորհիվ «իրավապաշտպանները պաշտպանվում են իրենց խաղաղ գործունեության համար հետապնդվելուց»:

Իրավապաշտպանները պետք է ի վիճակի լինեն իրենց աշխատանքն անել առանց վախի, որ իրենց կարծիքներն արտահայտելու պատճառով չարժանան վրեժխնդրության:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Պետությունները պետք է ապահովեն, որ իրավապաշտպանների համար կիրառելի և հասանելի լինեն «տեղեկատվական տեխնոլոգիաներն ու իրենց ընտրությամբ լրատվամիջոցները, այդ թվում՝ ռադիոն, հեռուստատեսությունը և ինտերնետային լրատվամիջոցները»:

Սա պետք է «խրախուսվի ու դյուրինացվի ներպետական մակարդակում... որպես կարծիքի ու ազատ արտահայտման հիմնարար իրավունքի իրացման բաղկացուցիչ մաս»: Պետությունները պետք է խուսափեն որոշակի մարդկանց համար լրատվամիջոցների հասանելիությունն ու գործածելիությունը խոչընդոտելուց:

Այս մոտեցումն ամրագրված է հետևյալ փաստաթղթում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև(UN Doc: A/ HRC/RES/22/6), պարբերություն 7:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տպագիր կամ էլեկտրոնային լրատվամիջոցներին վերահսկելու և մշտադիտարկելու ցանկացած չարդարացված ու չարաշահող գործողություն, օրինակ՝ ինտերնետի գրաքննությունը, ազատ արտահայտման իրավունքի ոտնահարում է: Մարդիկ պետք է կարողանան իրենց ընտրությամբ մուտք գործել և օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները կամ լրատվամիջոցները: Նրանց նկատմամբ չպետք է լինի իշխանությունների կողմից արտաքին ճնշում կամ սահմանափակող վերահսկողություն:

Ինչպես ընդգծում է ՄԱԿ-ի կարծիքի ու արտահայտվելու ազատության հարցերով հատուկ զեկուցողը, տեղեկատվական տեխնոլոգիաների հասանելիության ու գործածման հարցում միջամտելով՝ պետությունները խոչընդոտում են այնպիսի հիմնարար իրավունքների իրացմանը, ինչպիսիք են՝ խոսքի ու ազատ արտահայտման, կյանքի, մի շարք տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Որոշ երկրներում կառավարությունները արգելափակել են կառավարությունը քննադատող և մարդու իրավունքների հարցեր բարձրաձայնող անկախ լրատվամիջոցներին: Նրանք փորձել են նաև արգելափակել անկախ լրատվամիոցների, բլոգերների և իրավապաշտպանների էջերը սոցիալական ցանցերում:

Տպագիր ու էլեկտրոնային լրատվամիջոցները իրավապաշտպանների համար կարևոր գործիք են իրենց գործունեությունը վարելու և հանրային բանավեճերի մասնակցելու համար: Այն գործողությունները, որոնք խոչընդոտում են, որ լրատվամիջոցները հասանելի լինեն իրավապաշտպանների տեսակետները տարածելու համար, նպատակ ունեն նրանց գործունեության ազդեցությունը նվազեցնել և թուլացնել լայն հանրությանը իրենց ձայնը հասանելի դարձնելու կարողությունը:

Պետությունները պետք է գիտակցեն, թե ինչ նշանակություն ունի ազատ ընտրությամբ լրատվամիջոցներից օգտվելու հասանելիության ապահովումը, և ակտիվ դերակատարում ունենան այս հարցում, այդ թվում՝ այնպիսի գործողություններով, ինչպիսին է օրենսդրական կարգավորումների ընդունումը, որոնք ամրագրում են լրատվամիջոցների գործունեությանը միջամտելու արգելքը:

ԽԱՂԱՂ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԻ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

Պետությունները պետք է ապահովեն, որ «իրավապաշտպաններն ի վիճակի լինեն իրենց կարևոր գործունեությունը վարել խաղաղ բողոցի ցույցերի համատեքստում»: Այդ իմաստով պետությունները պետք է դյուրին դարձնեն խաղաղ բողոցի ցույցեր անելու գործընթացը՝ «ցուցարարների համար հասանելի դարձնելով հանրային տարածքն ու անհրաժեշտության դեպքում առանց խտրականության պաշտպանելով նրանց որևէ տեսակի սպառնալիքից ու հետապնդումից»:

Այս իմաստով ոչ ոք չպետք է ենթարկվի «ուժի անհամաչափ կամ համատարած կիրառման, կամայական ձերբակալման կամ կալանավորման, կտտանքի կամ այլ տեսակի դաժան, անմարդկային ու նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, հարկադիր անհետացման, քրեական ու քաղաքացիական վարույթների չարաշահման կամ վերը նշված գործողությունների սպառնալիքների»: Խաղաղ բողոքի ցույցերի համատեքստում պետությունները պետք է այնպես անեն, որ «մարդու իրավունքներ խախտողներն ու ոտնահարողները ենթարկվեն պատասխանատվության դատական կամ ներպետական այլ մեխանիզմների միջոցով», ինչպես նաև նման խախտումների զոհերի համար ապահովեն «իրավունքի վերականգնման ու փոխհատուցման հասանելիություն»:

Հանրային անվտանգությունն ու կարգը պահպանող օրենսդրությունը չպետք է գործածվի «որևէ իրավունքի իրացումը խոչընդոտելու կամ սահմանափակելու նպատակով, այդ թվում՝ ազատ արտահայտման, միություն կազմելու ու խաղաղ հավաքի իրավունքները, որոնք էական են այլ իրավունքներ առաջ մղելու ու պատշպանելու համար»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/22/6), պարբերություններ 4 և 6,
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2014թ. ապրիլի բանաձև մարդու իրավունքների խթանման ու պաշտպանության մասին խաղաղ բողոքի ցույցերի համատեքստում (UN Doc: A/HRC/25/38), պարբերություն 4 և 19:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկելով՝ պետությունները պետք է ապահովեն, որ իրավապահ մարմինների պաշտոնյաները խաղաղ բողոքի ցույցերի ժամանակ չկիրառեն անհամաչափ ուժ: Պետությունները պետք է ձեռնպահ մնան չարդարացված հիմնավորումները չարաշահելուց և դրանցով բողոքի ցույց անելու իրավունքը սահմանափակելուց: Նման չարաշահումներ են, օրինակ՝ հակահաբեկչական կամ ազգային անվտանգությունից բխած նկատառումները: Փոխարենը պետությունները պետք է դյուրին դարձնեն հանրային տարածքի հասանելիությունը և ապահովեն բողոքի ցույցերի հարթ անցկացումն՝ առանց իրավապահ մարմինների կողմից բռնության անպատեհ կիրառման: Պետությունների իրավական կարգավորումները պետք է պարունակեն արդյունավետ, հստակ ձևակերպված ու ողջամիտ դրույթներ բողոքի ցույց անցկացնելու իրավունքի մասին, սահմանափակումներ պետք է անցկացվեն միայն ծայրահեղ դեպքերում: Բողոքի ցույց անցկացնելու իրավունքը հիմնված է այլ իրավունքների ճանաչման ու պաշտպանության վրա, այդ թվում՝ կարծիքի ու ազատ արտահայտման, միավորման ու խաղաղ հավաքների:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Իրավապաշտպաններն առանցքային դեր ունեն բողոքի ձայնի ու քննադատության խաղաղ ու կառուցողական եղանակով արտահայտման հարցում: Այդուհանդերձ, իշխանությունները հետևողական ու միտումնավոր կերպով ճնշում են իրավապաշտպաններին ու քաղաքացիական այլ խմբերին հանրային մեծ ներգրավվածություն պահանջող ժամանակահատվածներում, օրինակ՝ ընտրությունների ժամանակ:

«Պետությունները քրեականացրել են ընտրությունների ժամանակ խաղաղ հավաքների կազմակերպումն ու դրանց անցկացումը, որպեսզի կանխարգելեն կամ պատժեն նման ցանկություն ունեցողներին», ընդգծել է ՄԱԿ-ի հավաքների ու միություններ կազմելու ազատության հարցերով հատուկ զեկուցողը:

ՊԱՅՔԱՐ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄ

Պետությունները պետք է «պայքարեն անպատժելիության դեմ՝ քննելով և պատասխանատվության ենթարկելով բոլոր այն սուբյեկտներին՝ լինեն դրանք պետական կամ ոչ պետական, որոնք հարձակվում կամ սպառնում են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անհատներին, խմբերին կամ հաստատություններին:

Անպատժելիության դեմ պայքարելու համար պետությունները պետք է «ապահովեն այնպիսի միջավայր, որը նպաստավոր է իրավապաշտպան գործունեության համար և արդյունավետորեն պաշտպանում է նրանց վախեցնելու, ճնշման միջոցներ կիրառելու գործողություններից, ինչպես նաև նման դեպքերի ժամանակ պետք է իրականացնեն արդյունավետ հետաքննություններ»:

«Իրավապաշտպաններին պաշտպանելու պարտականությունը նախևառաջ պետությանն է. որոշ դեպքերում պետություններն իրենք կարող են պատասխանատվություն կրել ոչ պետական սուբյեկտների գործողությունների համար»: Անպատժելիության դեմ պայքարն արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ իրավապաշտպանների, նրանց լիազոր ներկայացուցիչների, հարազատների ու փոխկապակցված անձանց նկատմամբ բռնարարքների ու իրավախախտումների համար պատասխանատուները պատշաճ կերպով կկանգնեն արդարադատության առջև»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2017թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/72/247), պարբերություն 7,
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2016թ. մարտի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/31/32), պարբերություն 6,
• Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2016թ. հունվարի 28-ի բանաձև (2095), պարբերություններ 3 և 6.2:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անպատժելիության դեմ պայքարը մեծ նշանակություն ունի իրավապաշտպանների անվտանգության համար: Անկախ դեպքի բնույթից՝ իրավապաշտպանների նկատմամբ հարձակումներն ու սպառնալիքները պետք է պատշաճ կերպով և նույն ջանասիրությամբ հետաքննվեն՝ լինեն դրանք պետական, թե ոչ պետական սուբյեկտների իրականացրած գործողություններ: Պատասխանատուները պետք է կանգնեն արդարադատության առջև:

Երբ պետությունները ձախողում են իրավապաշտպանների նկատմամբ ոչ պետական սուբյեկտների կողմից բռնի գործողությունների արդյունավետ հետաքննումը, այդ պասիվությունն ընկալվում է որպես նման գործողությունների հանդուրժում: Պետություններն իրենց անգործության համար նույնչափ պատասխանատու են, որչափ բռնություն կիրառողները:

Պետությունները պետք է ապահովություն ու երաշխիքներ տրամադրեն իրավապաշտպաններին և պատշաճ կերպով պաշտպանեն հարձակումների զոհերին դատավարությունների ընթացքում, այդ թվում՝ տրամադրելով աջակցություն և հրապարակայնորեն դատապարտելով հարձակումները:

Պետությունները պետք է իրենց իրավական համակարգը համապատասխանեցնեն միջազգային նորմերին և ապահովեն պատշաճ իրավական դաշտ: Նրանք պետք է հասանելի բոլոր միջոցները գործադրեն անպատժելիության դեմ արդյունավետորեն պայքարելու ուղղությամբ:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Լրագրողների նկատմամբ տեղի ունեցած հանցագործությունների անպատժելիությունը հատուկ ուշադրության է արժանի: Երբ լրագրողի անձի նկատմամբ վտանգներին գումարվում է անպատժելիությունը, հանրությունն ուղղակի վարակվում է բռնաճնշումների վախով ու ինքնագրաքննությամբ: Սա թուլացնում է ժողովրդավարական կարգն ու զրկում բնակչությանը հավասարակշռված տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, որով իրենք ի վիճակի կլինեին որոշումներ կայացնել: Որոշ երկրներում իրավապաշտպան լինելու պատճառով բանտ ընկնելու հավանականությունն ավելի մեծ է, քան լրագրող սպանելու պատճառով: Երբ պետությունները չեն դրսևորում նման բռնարարքները կանխարգելելու կամք, անպատժելիությունը լռեցնում է ազատ մամուլի ձայնը:

ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄ

Պետությունները պետք է «համապատասխան քաղաքականություններ ու օրենքներ ընդունեն», որպեսզի մասնավոր ընկերությունները պատասխանատվության ենթարկվեն «իրավապաշտպանների նկատմամբ սպառնալիքների կամ հարձակումների մեջ ներգրավվածության» համար: Ոչ պետական սուբյեկտները, ներառյալ անդրազգային կորպորացիաներն ու այլ մասնավոր ձեռնարկությունները, պետք է «հարգեն, խթանեն ու փորձեն պաշտպանել բոլորի, ներառյալ՝ իրավապաշտպանների իրավունքներն ու հիմնարար ազատությունները»:

Մասնավոր ընկերությունները պետք է «խուսափեն, բացահայտեն, գնահատեն ու լուծեն իրենց գործունեության արդյունքում մարդու իրավունքների վրա բացասական ազդեցություն թողող հարցերը՝ հնարավոր ազդակիր խմբերի ու այլ շահագրգիռ կողմերի հետ բովանդակային խորհրդակցությունների միջոցով այնպես, որ դրանք համապատասխանեն «Բիզնես ու մարդու իրավունքներ» ուղենշային սկզբունքներին»: Ավելին, նրանք պետք է «համագործակցեն խնդիրը հարթող գործողությունների շուրջ, փոխանակեն լավագույն պրակտիկան և հաղորդեն, թե ինչպես են իրենք լուծելու մարդու իրավունքների վրա իրենց բացասական ազդեցությունները»:

Իրավապաշտպանների իրավունքները մասնավոր ընկերությունների ոտնահարումներից պաշտպանելու համար պետությունները պետք է «խթանեն արդյունավետ կանխարգելում, պատասխանատվության ենթարկեն իրավախախտներին, վերականգնեն խախտված իրավունքները ու փոխհատուցեն վնասները»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2017թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/72/247), պարբերություն 12,
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2015թ. մարտի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/31/32) պարբերություններ 18 և 19:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային կառույցները ոչ պետական սուբյեկտներին խրախուսում են գնահատել իրենց գործունեության ազդեցությունը ազդակիր իրավապաշտպանների վրա: Ոչ պետական սուբյեկտները պետք է ձեռնպահ մնան և խուսափեն իրավապաշտպանների նկատմամբ հարձակումների, ճնշման, ահաբեկման գործողություններին հանցակից լինելուց, այդ թվում՝ բոլոր այն անձանց նկատմամբ կատարվող բռնարարքներից, որոնք իրացնում են արտահայտվելու, միավորվելու, հավաքների, բողոքի ցույցերի իրենց իրավունքները տվյալ բիզնեսի կամ դրա շահերի դեմ:

Նման իրավիճակներից խուսափելու համար ոչ պետական սուբյեկտները, ներառյալ՝ մասնավոր ձեռնարկատերերը պետք է ներգրավեն ու խորհրդակցություններ վարեն իրավապաշտպանների հետ իրենց գործունեության վաղ փուլում: Սա պետք է արվի բաց երկխոսության միջոցով, որպեսզի բացահայտվեն, գնահատվեն ու լուծումներ ստանան իրավապաշտպանների իրավունքների խախտումները, որոնք կարող են առաջ գալ մասնավորի գործունեությունից: Այս մասին ընգծում է ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցողը:

Այս առումով պետությունները պետք է ընդունեն համապատասխան օրենսդրություն և ներգրավված լինեն գործընթացների բոլոր փուլերում, որպեսզի ապահովեն, որ մասնավոր ընկերությունները կատարեն մարդու իրավունքների առնչությամբ իրենց պարտականությունները:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Բնապահպան իրավապաշտպանները հաճախ են ընդգծում պետության ու մասնավոր ընկերությունների համար անհարմար ճշմարտություններ, ու դրա համար ենթարկվում են բռնության ու այլ բռնարարքների ինչպես պետության, այնպես էլ ոչ պետական սուբյեկտների կողմից: Որոշ դեպքերում նրանց ընդդիմադիրները նրանց վարկաբեկում են որպես «հակազարգացման» ջատագովներ կամ «անհայրենասերներ»: ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցողը բոլոր կողմերին կոչ է արել «հրատապ կարգով և հրապարակայնորեն որդեգրել զրո հանդուրժողություն բնապահպան իրավապաշտպանների սպանությունների և նրանց նկատմամբ բռնարարքների հանդեպ, և անմիջապես սկսել իրականացնել նրանց հզորացնող ու պաշտպանող քաղաքականություններ ու մեխանիզմներ»:

Մասնավոր ընկերությունները պետք է ներգրավված լինեն իրավապաշտպանների պաշտպանության գործում, նրանք պետք է ակտիվ դերակատարում ունենան մարդու իրավունքները պաշտպանելու ու խթանելու գործընթացներում՝ իրավապաշտպաններին առաջարկելով հրապարակային աջակցություն: Հաշվի առնելով այն, որ նրանց ցանցերն ու ազդեցությունը ողջ աշխարհում կարող են հանգեցնել քաղաքականությունների փոփոխության, նրանք չպետք է անտեսեն իրավապաշտպանների պաշտպանության հարցում օգնելու իրենց կարողությունը:

ԿԻՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Իրավապաշտպանների, ներառյալ կին իրավապաշտպանների գործունեության նկատմամբ հարգանքն ու աջակցությունը ընդհանուր առմամբ էական նշանակություն ունի մարդու իրավունքների իրացման հարցում»:

Պետությունները պետք է «բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկեն նրանց պաշտպանության համար» և «իրենց ջանքերում ներգծեն գենդերային տեսանկյունը, որպեսզի ստեղծեն իրավունքների պաշտպանության համար ապահով ու նպաստավոր միջավայր»: Պետությունները պետք է ակտիվ դերակատարում ստանձնեն, ներառյալ՝ ձեռնարկեն կին իրավապաշտպանների պաշտպանության «համապատասխան, արագ ու պրակտիկ քայլեր»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. ապրիլի բանաձև (UN Doc: A/HRC/ RES/22/6), պարբերություն 12,
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2013թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/ RES/68/181), պարբերություններ 3 և 5,
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբելայի 2015թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/70/161), պարբերություն 14,
• Կանանց ու աղջիկների նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի 2017թ. հունիսի բանաձև (UN Doc: A/HRC/35/L.29):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային կառույցները պետություններին կոչ են անում լուծել կին իրավապաշտպանների իրավունքների ոտնահարումների անպատժելիության խնդիրը և ապահովել կին իրավապաշտպանների մասնակցությունն իրենց պաշտպանությանը վերաբերող քաղաքականությունների ու ծրագրերի քննարկմանը: Բանաձևերը նաև ընդգծում են, որ կին իրավապաշտպանները որոշակի տեսակի բռնությունների են առերեսվում, ինչպիսիք են՝ գենդերային հիմքով բռնությունը, բռնաբարությունը և սեռական այլ տեսակի բռնությունները, հետապնդումը, վերբալ բռնությունը, պատվի վրա հարձակումները տպագիր մամուլում ու վիրտուալ տարածքներում:

Բավարար չէ, որ պետությունները պարզապես գենդերային տեսանկյունը որդեգրեն իրենց օրենսդրական դաշտում, նրանք ավելին պետք է անեն. ձեռնարկեն կին իրավապաշտպաններին պաշտպանելու գործողությունները մշտադիտարկելու բոլոր հասանելի ու անհրաժեշտ միջոցները:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Կին իրավապաշտպանները ձեռնոց են նետում գենդերային անհավասարությանն ու կարծրատիպերին, առաջ են մղում կանանց սեռական ու վերարտադրողական իրավունքները, խթանում կանանց հզորացումն ու մասնակցությունը հասարակական կյանքին: «Նրանք ավելի շատ են ենթարկվում բռնության որոշակի տեսակների և այլ իրավախախտումների, նախապաշարումների, բացառման, մերժման ռիսկին, քան իրենց տղամարդ գործընկերները»,- նշում է ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցողը:

Կին իրավապաշտպանների վճռականությունն ու ներգրավվածությունն արտացոլված է ՄԱԿ-ի համակարգում, որտեղ նշանակալի առաջընթաց է արձանագրվել այս խմբի իրավազրկվածությունն ընդգծելու և նրանց պաշտպանելու ուղղությամբ: Ընդունվող ավելի ու ավելի շատ բանաձևերի կիզակետում է կանանց իրավունքների դրությունը, և դրանք նրանց պաշտպանության նորմերի ամուր հենք են ապահովում:

«Կին իրավապաշտպանները պայքարում են երկու մակարդակում. նախ՝ որպես իրավապաշտպաններ, երկրորդ՝ որպես կանայք: Նրանք կրում են երկակի խտրականություն, նրանց նկատմամբ բռնությունը երկակի է»,-նշում է Հայաստանում «Կանանց ռեսուրսային կենտրոնի» ղեկավար, կին իրավապաշտպան Լարա Ահարոնյանը:

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաստաբաններն «առանցքային դերակատարում ունեն մարդու իրավունքները պահպանելու հարցում» և պետք է ի վիճակի լինեն «իրենց գործառույթներն իրականացնել ազատ, անկախ և առանց ճնշման վախի»:

Փաստաբանների անկախությունը երաշխավորելու համար պետությունները պետք է ձեռնարկեն «օրենսդրական, իրավակիրառ և այլ անհրաժեշտ արդյունավետ միջոցներ», որոնք փաստաբաններին թույլ կտան իրենց մասնագիտական գործառույթներն իրականացնել պատշաճ կերպով:

Պետությունները պետք է ընդունեն այնպիսի օրենսդրություն, որը «հող է ստեղծում անկախ և ինքնակառավարվող փաստաբանների մասնագիտական ասոցիացիաների ստեղծման համար և ճանաչում է նրանց կարևոր դերն իրավունքի գերակայությունը պահպանելու, մարդու իրավունքները խթանելու ու պաշտպանելու հարցում»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2017թ. հունիսի բանաձև դատական մարմինների, ատենակալների անկախության ու անկողմնապահության, իրավաբանների անկախության մասին (UN Doc: A/HRC/RES/35/12), պարբերություններ 1, 7, և 15:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Իրավապաշտպան փաստաբան» եզրույթը վերաբերում է ցանկացած փաստաբանի, որը իրավաբանական խորհրդատվություն է տալիս մարդու իրավունքների խախտումների զոհ հանդիսացող անձանց՝ անկախ մասնագիտական ասոցիացիայում անդամակցությունից:

Արդար դատավարության իրավունքը երաշխավորելու նպատակով կառավարությունները չպետք է միջամտեն փաստաբանների իրավունքներին՝ իրենց ընտրությամբ ներկայացնել իրենց վստահորդներին և իրենց ընտրությամբ աշխատել խնդիրների շուրջ: Կառավարությունները պետք է ապահովեն, որ իրավապաշտպան փաստաբաններն ունենան իրենց վստահորդներին հասանելի լինելու և նրանց հետ հաղորդակցվելու նույն մակարդակի հնարավորություններ, ինչ այլ փաստաբաններ:

Փաստաբանների մասնագիտական կազմակերպությունների անկախությունը պետք է հարգվի, իսկ անդամակցությունից ու լիցենզիայից զրկելը պետք է լինի միայն վարչարարական միջոց, որի նպատակն է ապահովել մասնագիտության պրոֆեսիոնալ ու էթիկական նորմերը, այլ ոչ թե կառավարության կողմից փաստաբաններին պատժելը: Պետությունները պետք է ձեռնպահ մնան փաստաբանների մասնագիտական կազմակերպությունների գործունեությանը միջամտելուց:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

«Հյուման ռայթս հաուսների» և «Հյուման ռայթս հաուս հիմնադրամի» պատրաստած՝ «Իրավապաշտպանները վտանգի ներքո» զեկույցն արձանագրում է, որ կա իրավապաշտպան փաստաբանների նկատմամբ սպառնալիքների ու վտանգների ավելացման միտում: Այս միտումն ունի իր հետևանքները. իրավապաշտպան փաստաբանները չեն կարողանում ապահով ու արդյունավետ գործել, նրանց վստահորդները չեն կարողանում իրացնել փաստաբանական պաշտպանություն ստանալու իրենց իրավունքը:

Հանրային կյանքի բոլոր ոլորտներում առաջնորդություն դրսևորող անձինք պետք է հրապարակայնորեն ընդունեն իրավապաշտպան փաստաբանների կարևոր ու լեգիտիմ դերակատարումը մարդու իրավունքները, ժողովրդավարությունն ու իրավունքի գերակայությունը խթանելու հարցում և պետք է խուսափեն իրավապաշտպան փաստաբաններին խարանավորելուց: Պետությունները պետք է հավելյալ միջոցներ ձեռնարկեն իրենց երկակի դերակատարման պատճառով առավել վտանգի ենթարկված փաստաբաններին ու դատավորներին պաշտպանելու ուղղությամբ, քանի որ նրանք գործում են և՛ որպես իրավունքի ոլորտի մասնագետներ, և՛ որպես իրավապաշտպաններ:

Մարդու իրավունքների իրացման հարցում առանցքային նշանակություն ունի փաստաբանների և նրանց անկախության պաշտպանությունը:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Փոքրամասնությունների իրավունքների շուրջ աշխատող իրավապաշտպանները կարևոր ու պահանջված դերակատարում ունեն: «Փոքրամասնություններին պատկանող կամ փոքրամասնական հայացքներ ու կարծիքներ ունեցող անձանց իրավունքները պաշտպանող անձինք և միությունները չպետք է ենթարկվեն խարանավորման և խտրականության»:

Պետությունները պետք է «ապահովեն, որ օրենսդրությունը, քաղաքականությունն ու իրական պրակտիկաները չխանգարեն փոքրամասնություններին պատկանող անձանց կամ նրանց շահերը պաշտպանող քաղաքացիական հասարակության իրավունքների իրացմանը»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2015թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/70/161), պարբերություն 15,
• Մարդու իրավունքների խորհրդի 2016թ. հուլիսի բանաձև քաղաքացիական հասարակության տարածքի մասին (UN Doc: A/HRC/RES/32/31), պարբերություն 5:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ակտիվիստներից ոմանց նկատմամբ սպառնալիքներն ավելի մեծ են լինում, քան այլոց, մասնավորապես իրավապաշտպանների մասին է խոսքը, որոնք մարտահրավեր են նետում սոցիալական ու մշակութային նորմերին, չեն տեղավորվում կարծրատիպերի ու սահմանված դերերի մեջ, որոնք ձեռնոց են նետում հասարակությունում իշխանական կառուցակարգերին: Առավել վտանգված են սեռական փոքրամասնություններին, բնիկ ժողովուրդներին և այլ փոքրամասնություններին պաշտպանող իրավապաշտպանները: Այս իրավապաշտպաններին հասարակության անդամները հաճախ են խարանավորում, հարձակումներ գործում նրանց նկատմամբ, սպառնում նրանց գործունեության պատճառով, ընդգծում է ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցողը:

Փոքրամասնությունների պաշտպաններն ունեն բռնությունից ու խտրականությունից հատուկ ու ընդլայնված պաշտպանության կարիք: Պետությունները պետք հրապարակայնորեն արտահայտեն իրենց աջակցությունը և հստակ դիրքորոշում արտահայտեն, որ մերժում են փոքրամասնությունների պաշտպանների նկատմամբ բռնարարքները: Նման դեպքերի անպատժելիությունը «նրանց նկատմամբ բռնարարքների քողարկված լեգիտիմացում է», իսկ «նման խմբերի պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել միայն այն ժամանակ, երբ նրանց դրությունը դիտարկվի ամբողջական ու խաչաձև հատվող խնդիրների ուսումնասիրման մոտեցումով»,- նշում է ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցեով հատուկ զեկուցողը:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Չնայած իրենց գործունեության դժվարին համատեքստին՝ փոքրամասնությունների իրավապաշտպանները հաջողությամբ են ներկայացնում փոքրամասնություն հանդիսացող անձանց դրությունն ու գրավում միջազգային հանրության ուշադրությունը:

Լեսբի, գեյ, բիսեռական, տրանս, ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց իրավունքները առաջխաղացնող իրավապաշտպաներին հաջողվել է ողջ աշխարհով համախմբել ջանքերը և իրենց ջատագովության շնորհիվ հանրային կարծիք փոխել: Այդուհանդերձ, այս իրավապաշտպանների նկատմամբ շատ են շանտաժների, շորթման փորձերը, վարկաբեկման արշավները հատկապես ինտերնետում և սոցիալական ցանցերում: Նրանք ստիպված են դիմակայել որոշակի կրոնական խմբերի ճնշումներին, որոնք իրավապաշտպաններին պատկերում են իբրև «սպառնալիք ազգային արժեքներին, որոնք ջատագովում են արևմտյան անբարոյական ու դեկադենտ բարքեր» (ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցով հատուկ զեկուցող):

Ներգաղթյալների իրավունքների պաշտպաններն ու նրանց աջակցող ակտիվիստները նույնպես դիմակայում են իրենց ու իրենց հարազատների նկատմամբ հնչող ահագնացող սպառնալիքներին, քանի որ իրենց աշխատանքը խիստ քաղաքականացված է, որոշ դեպքում՝ քրեականացված:

Փոքրամասնությունների իրավունքների պաշտպաններին պաշտպանելու համար պետությունները պետք է ձեռնարկեն հասցեական ու թիրախային միջոցառումներ և ապահով դարձնեն նման գործունեություն վարելը:

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրավապաշտպաններին պաշտպանելուց անդին պետությունները պետք է «ձեռնպահ մնան իրավապաշտպանների ընտանիքների անդամների և նրանց հետ փոխկապակցված անձանց ահաբեկման կամ ճնշման որևէ գործողությունից և ապահովեն պատշաճ պաշտպանություն նման դեպքերից»:

Պետությունները պետք է հրապարակայնորեն դատապարտեն նման գործողությունները և ապահովեն, որ իրավապաշտպանների ընտանիքի անդամները չունենան «իրենց համընդհանուր մարդու իրավունքները վայելելու խոչընդոտներ»:

Իրավապաշտպանների ներկայացուցիչների, նրանց հետ փոխկապակցված անձանց, նրանց ընտանիքի անդամների նկատմամբ բռնարարքների համար պատասխանատու ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական սուբյեկտները պետք է «անկողմնակալ հետաքննության ընթացակարգից հետո պատշաճ կերպով կանգնեն արդարադատության առջև»:

Այս մոտեցումներն ամրագրված են հետևյալ փաստաթղթերում.
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2013թ. բանաձև (UN Doc: A/HRC/ RES/22/6), պարբերություն 14,
• ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2015թ. դեկտեմբերի բանաձև (UN Doc: A/RES/70/161) պարբերություններ 5 և 9 (բ).,
• ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 2016թ. մարտի բանաձև (UN Doc: A/ HRC/RES/31/32), պարբերություն 6:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավապաշտպանների պատշպանության համար սահմանված նորմերից ու մեխանիզմներից իրավունք ունեն օգտվել նաև նրանց ընտանիքի անդամները, քանի որ նրանք նույնչափ առերեսվում են այն վտանգներին, ինչ իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող իրենց հարազատը կամ ընկերը:

Պետություններն ունեն իրավապաշտպանի ընտանիքի յուրաքանչյուր անդամի իրավունքները հարգելու, պաշտպանելու և ի կատար ածելու պարտականություն: Այս առումով ընտանիքը պետք է ընկալվի լայն իմաստով՝ ներառյալ ամուսինները կամ զուգընկերները, ցանկացած տարիքի երեխաները, ծնողները՝ չսահմանափակվելով միայն նրանցով:

Իրավապաշտպանների ընտանիքի անդամների նկատմամբ բռնությունը կամ ահաբեկումը հաճախ ծնված է լինում վրեժից: Իրական թիրախը իրավապաշտպանն է և նրա գործունեությունը: Ընտանիքի անդամներին թիրախավորելը իրավապաշտպանների նկատմամբ ճնշում գործադրելու միջոց է, որպեսզի նա հետ կանգնի իր գործից կամ քննադատությունից:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Իրավապաշտպանների ընտանիքների անդամների նկատմամբ ճնշումները գնալով աճում են ռեպրեսիվ պետություններում: Որոշ երկրներում իրավապաշտպանների ընտանիքները ենթարկվում են վարչական ու քրեական հետապնդման, այդ թվում՝ նրանց գույքի բռնագանձում, բանկային հաշիվների սառեցում, ճամփորդելու արգելք, հարկային խոշոր տույժեր, սպառնալիքներ աշխատատեղը կամ ապրուստի միջոցը կորցնելու միջոցով, նույնիսկ՝ ձերբակալում:

Երբ կառավարությունն անմիջապես է միջամտում իրավապաշտպանների անձնական կյանքին, դա իրավապաշտպանների ընտանիքների անդամների համար դառնում է ամենօրյա գլխացավանք: Ավելին, այն դեպքերում, երբ իրավապաշտպանները ստիպված են լինում վտանգից փախչել իրենց ընտանիքների հետ միասին, խախտվում են նաև ընտանիքի անդամների տարրական իրավունքները, օրինակ՝ երեխաները զրկվում են կանոնավոր կերպով դպրոց հաճախելուց:

Միջազգային կառույցները գիտակցում են, թե ինչ վտանգներով են շրջապատված իրավապաշտպանները, և թե ինչ կողմնակի ազդեցություններ ունեն դրանք նրանց ընտանիքների անդամների վրա, ուստի վերջին տարիներին միջազգային կառույցներն ընդլայնել են պաշտպանության շրջանակը, որպեսզի վերջինները նույնպես ընդգրկվեն պաշտպանության մեջ:

Պետությունները պետք է ընդունեն այնպիսի օրենսդրական նորմեր, որոնցով պաշտպանություն կապահովվի իրավապաշտպանների ընտանիքների անդամների համար նույնպես: Պետությունները պետք է նաև հետևեն այդ նորմերի կատարմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԸ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ

ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ՇՈՒՐՋ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների խորհրդի 22/6 բանաձև
2013թ. ապրիլ

Համահեղինակներ՝ 102
Ընդունվել է միաձայն

ՄԱԿ-ի ԳԱ 70/161 բանաձև
2015թ. դեկտեմբեր

Համահեղինակներ՝ 73
Այո՝ 127
Ոչ՝14
Չեն մասնակցել քվեարկությանը՝ 11
Ձեռնպահ՝ 41

ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 31/32 բանաձև
2016թ.մարտ

Համահեղինակներ՝ 61
Այո՝ 33
Ոչ՝ 6
Ձեռնպահ՝ 8

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ՝ ԸՍՏ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Աղյուսակում ներկայացված են երկրները՝ ըստ քվերակության արդյունքների: Ձախից աջ՝ 2013թ. ապրիլի, 2015թ. դեկտեմբերի, 2016թ. մարտի, 2017թ. հունիսի, 2017թ. դեկտեմբերի քվեարկություն:

Թավ տառատեսակով երկրներում ՀՌՀ հիմնադրամն ու «Հյուման ռայթս հաուս-ները» գործունեություն են վարում:

- Համահեղինակ
- Այո կամ միաձայն
- Ոչ
- Չի քվեարկել
- Ձեռնպահ
- Քվեարկության պահին Մարդու իրավունքների խորհրդի անդամ չէ

	2013	2015	2016	2017	2017
Աֆղանստան	Այո	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Ալբանիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Այո	Համահեղինակ
Ալժիր	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ	Այո
Անդորրա	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Անգոլա	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Անտիգուա և Բարբուդա	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Արգենտինա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Հայաստան	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Ավստրալիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Ավստրիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Ադրբեջան	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բահամյան Կղզիներ	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բահրեյն	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բանգլադեշ	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Այո	Այո
Բարբադոս	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բելառուս	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բելգիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Բելիզ	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բենին	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բութան	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բոլիվիա	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո	Այո
Բոսնիա և Հերցեգովինա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Բոցվանա	Այո	Այո	Ձեռնպահ	Համահեղինակ	Այո
Բրազիլիա	Համահեղինակ	Այո	Համահեղինակ	Այո	Համահեղինակ
Բրունեյ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Բուլղարիա	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ	Համահեղինակ
Բուրկինա Ֆասո	Այո	Ոչ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Բուրունդի	Ձեռնպահ	Ոչ	Ոչ	Այո	Համահեղինակ
Կամբոջա	Ձեռնպահ	Ոչ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Կամերուն	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Կանադա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Կաբո Վերդե	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Կենտրոնաֆրիկյան Հանր.	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Չադ	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Չիլի	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ
Չինաստան	Ձեռնպահ	Ոչ	Ոչ	Այո	Այո
Կոլումբիա	Ձեռնպահ	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Կոմորյան Կղզիներ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Կոնգոյի Հանրապետ.	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո	Այո
Կոստա Ռիկա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ
Կոտ դ'Իվուար	Համահեղինակ	Ձեռնպահ	Այո	Այո	Համահեղինակ
Խորվաթիա	Համահեղինակ	Այո	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Կիպրոս	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Կուբա	Ձեռնպահ	Ոչ	Ոչ	Այո	Այո
Չեխիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Ջիբութի	Համահեղինակ	Այո	Համահեղինակ	Ձեռնպահ	Այո
Դանիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Դոմինիկա	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Դոմինիկյան Հանրապետ.	Ձեռնպահ	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Կոնգոյի Դեմոկր. Հանր.	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Արևելյան Թիմոր	Համահեղինակ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Էկվադոր	Այո	Ձեռնպահ	Այո	Այո	Համահեղինակ
Եգիպտոս	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո	Համահեղինակ
Սալվադոր	Ձեռնպահ	Համահեղինակ	Ձեռնպահ	Այո	Համահեղինակ
Հասարակածային Գվինեա	Ձեռնպահ	Ոչ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Էրիթրեա	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Էստոնիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ
Եթովպիա	Այո	Այո	Այո	Այո	Համահեղինակ
Ֆիջի	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Ֆինլանդիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Ֆրանսիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Գաբոն	Այո	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Գամբիա	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Վրաստան	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Այո	Համահեղինակ
Գերմանիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Գանա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Հունաստան	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ
Գրենադա	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Գվատեմալա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Այո
Գվինեա	Ձեռնպահ	Այո	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Գվինեա Բիսաու	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Գայանա	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Հաիթի	Ձեռնպահ	Այո	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ
Հորդանան	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Հունգարիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Իսլանդիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Հնդկաստան	Այո	Այո	Այո	Այո	Այո
Ինդոնեզիա	Համահեղինակ	Այո	Այո	Այո	Այո
Իրան	Ձեռնպահ	Ոչ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Իրաք	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո	Այո
Իռլանդիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ
Իսրայել	Ձեռնպահ	Այո	Համահեղինակ	Համահեղինակ	Այո
Իտալիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ
Ճամայկա	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Ճապոնիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Այո	Այո
Հորդանան	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Ղազախստան	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Քենիա	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո	Այո
Կիրիբատի	Ձեռնպահ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Քուվեյթ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Ղրղզստան	Ձեռնպահ	Այո	Այո	Այո	Այո
Լաոս	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Լատվիա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Լիբանան	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ
Լեսոթո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Լիբերիա	Ձեռնպահ	Համահեղինակ	Ձեռնպահ	Ձեռնպահ	Համահեղինակ
Լիբիա	Համահեղինակ	Այո	Ձեռնպահ	Ձեռնպահ	Այո
Լիխտենշտայն	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ
Լիտվա	Համահեղինակ	Համահեղինակ	Համահեղինակ	Ձեռնպահ	Համահեղինակ

Մարդու իրավունքների խորհրդի 35/12 բանաձև
2017թ. հունիս

Համահեղինակներ՝ 42
Ընդունվել է միաձայն

ՄԱԿ-ի ԳԱ 35/12 բանաձև
2017թ. դեկտեմբեր

Համահեղինակներ՝ 76
Ընդունվել է միաձայն

Լյուքսեմբուրգ
Մադագասկար
Մալավի
Մալայզիա
Մալդիվներ
Մալի
Մալթա
Մարշալյան Կղզիներ
Մավրիտանիա
Մավրիկիոս
Մեքսիկա
Միկրոնեզիայի Դաշնային Նահանգներ
Մոլդովա
Մոնակո
Մոնղոլիա
Չեռնոգորիա
Մարոկկո
Մոզամբիկ
Մյանմար
Նամիբիա
Նաուրու
Նեպալ
Նիդեռլանդներ
Նոր Զելանդիա
Նիկարագուա
Նիգեր
Նիգերիա
Հարավային Կորեա
Նորվեգիա
Օման
Պակիստան
Պապուա Նոր Գվինեա
Պալաու

Պանամա
Պարագվայ
Պերու
Ֆիլիպիններ
Լեհաստան
Պորտուգալիա
Կատար
Ռումինիա
Ռուսաստան
Ռուանդա
Սենթ Քիթս և Նևիս
Սենտ Լյուսիա
Սենթ Վինսենթ և Գրենադիններ
Սամոա
Սան Մարինո
Սան Տոմե և Պրինսիպի
Սաուդյան Արաբիա
Սենեգալ
Սերբիա
Սեյշելյան Կղզիներ
Սիեռա Լեոնե
Սինգապուր
Սլովակիա
Սլովենիա
Սողոմի Կղզիներ
Սոմալի
Հարավաֆրիկյան Հանրապետություն
Հյուսիսային Կորեա
Հարավային Սուդան
Իսպանիա
Շրի Լանկա
Պաղեստին
Սուրինամ

Սվազիլենդ
Շվեդիա
Շվեյցարիա
Սուդան
Սիրիա
Մակեդոնիայի Հանրապետություն
Տաջիկստան
Տանզանիա
Թաիլանդ
Տոգո
Տոնգա
Տրինիդադ և Տոբագո
Թունիս
Թուրքիա
Թուրքմենստան
Թուվալու
Ուգանդա
Ուկրաինա
Արաբական Միացյալ Էմիրություններ
Միացյալ Թագավորություն
Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Ուրուգվայ
Ուզբեկստան
Վանուատու
Վենեսուելա
Վիետնամ
Եմեն
Զամբիա
Զիմբաբվե

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՔՍԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄ

- Իրավապաշտպանությունը քրեական հետապնդումից զերծ պահելը
- ՀԿ-ների ֆինանսավորման սահմանափակումների վերացում
- Խուսափում գրանցվելու պահանջից և իրավական այլ սահմանափակումներից
- Այլախոհության ընդունում
- Լրատվամիջոցների հասանելիության և ընտրության ապահովում
- Բոլոր տեսակի ճնշման միջոցների վերացում
- Կին իրավապաշտպանների պաշտպանություն
- ՀԿ-ների անկախության հարգում

- Իրավապաշտպան լինելու իրավունքը
- Հանրային աջակցություն իրավապաշտպաններին

ՀԻՄՆԱՔԱՐԵՐ և ՀՈՌ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1998

ՄԱԿ-ն ընդունում է Իրավապաշտպանների մասին հռչակագիրը

2008

Եվրոպայի խորհուրդն ընդունում է Իրավապաշտպանների մասին հռչակագիրը

2011

ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի բարեփոխումներից և 2006թ. Մարդու իրավունքների խորհրդի ստեղծումից հետո իրավապաշտպանների մասին առաջին թեմատիկ բանաձևը միաձայն ընդունվում է Մարդու իրավունքների խորհրդում 2011թ.:

ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցող Մարգարետ Սեկագյան ներկայացնում է Հայաստանի վերաբերյալ իր զեկույցը:

2013

«Հյուման ռայթս հաուս հիմնադրամը» սատարում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի ընդունած՝ բարձր նորմեր սահմանող բանաձևերը:

Աննա Դոբրովոլսկայան (Երիտասարդների իրավունքների շարժում, Հյուման ռայթս հաուս Վորոնեժ)՝ Մարդու իրավունքների խորհրդում խոսում է իրավապաշտպաններին պաշտպանելու անհրաժեշտության մասին:

- Խաղաղ բողոքի ցույցերի դյուրինացում

2014

«Հյուման ռայթս հառուս հիմնադրամը» մեկնարկում է իրավապաշտպաններին վերաբերող միջազգային նորմերի մասին իրազեկման արշավ:

Հյուման ռայթս հառուս հիմնադրամը ստեղծում է ցանցի անդամ կազմակերպությունների կին իրավապաշտպանների ֆոտո ցուցահանդես: Լուսանկարում՝ Լելա Ծիսկարիշվիլին(Հյուման ռայթս հառուս Թբիլիսի), լուսանկարիչ՝ Դարո Սուլակաուրի:

- Կամայական ձերբակալման և կալանավորման վերացում
- Փոքրամասնությունների պաշտպանների պաշտպանություն
- Իրավապաշտպանների ընտանիքների անդամների պաշտպանություն

2015

Միջազգային համայնքը վերահաստատում է իրավապաշտպաններին, հատկապես՝ կին իրավապաշտպաններին պաշտպանելու իր կոչը: Չինաստանը, Ռուսաստանն ու մի շարք այլ երկրներ նոր բանաձևին դեմ են քվեարկում:

Լալա Ահարոնյանը (Կանանց ռեսուրսային կենտրոն, Հայաստան, Հյուման ռայթս հառուս Երևան) Հյուման ռայթս հառուս հիմնադրամի հետ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում ջատագովում է հօգուտ նոր բանաձևի ընդունման: Լուսանկարում նաև Ֆլորիան Իրմինգերն է:

- Պայքար անպատժելիության դեմ, պատասխանատվության ենթարկում
- Մասնավոր ընկերություններ-ի պատասխանատվության ենթարկում

2016

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ամենաբարձր մակարդակով կազմակերպում է մարդու իրավունքներին նվիրված պատմության մեջ առաջին միջոցառումը:

Միլան Անտոնիջևիչը (YUCOM, Հյուման ռայթս հառուս Բելգրադ) ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում խոսում է իրավապաշտպանների մասին: Լուսանկարում նաև Վեսնա Պուսիկն է:

- Իրավապաշտպան փաստաբանների պաշտպանություն

2017

Հռչակագրի ընդունման 20-րդ տարեդարձին ընդգծվում է իրավապաշտպանների կարևոր դերը և հիմք է դրվում իրավապաշտպանների մասին նոր դրական դիսկուրսի:

«Հյուման ռայթս հառուս հիմնադրամը» կոչ է անում Հռչակագրի ընդունման 20-րդ տարեդարձին ընդունել բանաձև, որում իրավապաշտպանները կարժանանան գովասանքի:

«Հյուման ռայթս հառուս հիմնադրամը» կազմակերպում է իր իրավապաշտպանների մասին իր առաջին բաց բրիֆինգը Եվրոպայի խորհրդի Մինիստրների կոմիտեի համար:

Դանուտա Պրժիվարան (Մարդու իրավունքնեի հելսինկյան հիմնադրամ) ՄԱԿ-ի մարդու իարվունքների խորհրդում խոսում է իրավապաշտպանների աշխատանքի մասին:

Տետիանա Պեչոնչիկը (Մարդու իրավունքների տեղեկատվական կենտրոն, Հյուման ռայթս հառուս Ղրիմ)«Հյուման ռայթս հառուս հիմնադրամի» հետ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում ջատագովում է հօգուտ նոր բանաձևի ընդունման:

ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցով հատուկ զեկուցող Միշել Ֆորստը ներկայացնում է Հունգարիայի վերաբերյալ իր զեկույցը:

Երախտագիտության խոսք

Մեր սրտաբուխ շնորհակալությունն ենք հայտնում «Հյուման ռայթս հաուս հիմնադրամի» ֆինանսավորողներին ու աջակիցներին, հատկապես՝ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությանը, Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային նախարարությանը, որոնց առատաձեռն աջակցության շնորհիվ հնարավոր է դարձել սույն հրապարակման տպագրությունը:

Norwegian Ministry
of Foreign Affairs

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizia

Federal Department for Foreign Affairs FDFA

«Իրավապաշտպանների իրավունքները» նպատակ ունի խթանել ու ամրապնդել իրավապաշտպաններին պաշտպանող ու աջակցող միջազգային նորմերի մասին իրազեկվածությունը:

Այն գործիք է իրավապաշտպանների համար, որը հստակ, հասանելի ու հասցեական կերպով բացատրում է միջազգային նորմերն ու դրանց շուրջ համատեքստը:

Իրավապաշտպանները կարող են օգտագործել գրքույկը պաշտպանության միջազգային նորմերը ներպետական մակարդակում տարածելու նպատակով, կառավարության հետ աշխատելիս և նրանց միջազգային պարտավորությունների համար պատասխանատվության կանչելիս, կարող են նախաձեռնել իրավապաշտպանների ու նրանց գործունեության կարևորության մասին քննարկումներ:

Գրքույկում նկարագրվում է 16 նորմ, որոնք վերցված են իրավապաշտպանների ու նրանց գործունեությանը վերաբերող շրջադարձային բանաձևերի բովանդակությունից և հակիրճ բնութագրված են:

HUMAN RIGHTS HOUSE FOUNDATION

ՀՅՈՒՄԱՆ ՌԱՅԹՍ ՀԱՈՒՍ Երևան

Հյուման ռայթս հաուս հիմնադրամ
Օսլո (գլխավոր գրասենյակ)
Kirkegata 5, 0153 Oslo, Norway
hrh@humanrightshouse.org

Ժնև
Rue de Varembé 1, PO Box 35
1211 Geneva 20, Switzerland
geneva@humanrightshouse.org

Հյուման ռայթս հաուս Երևան
Հովսեփ Էմին 119/2,
Երևան 0012, Հայաստան
hrhyerevan@gmail.com

humanrightshouse.org